ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր 2024 թվականի թիվ 138

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 13 արտահերթ նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Ծաղկաձոր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 102 որոշման հավելված 2-ը ուժը կորցրած ճանաչելու մասին.

3) Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին.

4) Դրամական օգնություն տրամադրելու մասին.

5) Հյուրանոցային սպորտի հանգստի և ժամանցի համալիրի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին.

6) Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող մոլիբդենի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու նախնական համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր 2024 թվականի թիվ 139

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 13-րդ հոդվածի, 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024թվականի հոկտեմբերի 29-ի N 01/05/07450-2024 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Որպես նվիրատվություն ընդունել՝ Հայաստանի Հանարապետության սեփականություն հանդիսացող, Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում գտնվող «ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ» (UAZ PATRIOT) մակնիշի, 426 LL 60 համարանիշով տրանսպորտային միջոցը (նույնականացման համարը՝ XTT316300F1048218, գույնը՝ սպիտակ, թողարկման տարեթիվ՝ 2015 թվականի արտադրության):

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել նվիրատվության պայմանագիրի կնքման գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր 2024 թվականի թիվ 140

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N102 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-Ը ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց »համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի :

2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը »N 102որոշման հավելված 2-ը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2024 թվականի նոյեմբերի 29-ի
N 140 որոշման

Կազմվել է ---------- 2024թ.

Բաղկացած է թերթից

Տպագրված է ընդամենը ---- օրինակ

Օրինակ-------

« Հաստատված է»

ՀՀ Կոտայքի մարզի

Ծաղկաձոր համայնքի ավագանու

2024 թվականի նոյեմբերի 29-ի

N 140 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

---------Ն. Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ

ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 27.07.2006թ

Գրանցման համար 85.210.01773

ՀՎՀՀ՝ 03008018

27.01.2017թ. գրանցված կանոնադրության թիվ

--------փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Գործակալության կողմից«----------» ---------20—թ.

աշխատակից՝ ----------

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ԾԱՂԿԱՁՈՐ 2024

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը(այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որը հանդիսանում է ուսումնադաստիարակչական հաստատություն, որի գլխավոր նպատակն է անձի բազմակողմանի մշակութային զարգացումը:

<<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոցի (վկայական N Բ002920, գրանցման համարը՝ 85. 0066, գրանցման ծածկագիրը՝ 10029252, գրանցման ամսաթիվը՝ 12.02.1977թ.) վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

1.2 Հաստատության հիմնադիրը Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքն է:

1.3 Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, <<Կրթության մասին >> ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Համայնքի և հաստատության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ:

1.5 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կնիք, դրոշմակնիք, լոգո, ձևաթղթեր և այլ անհատական միջոցներ:

1.6 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռը, բանկային հաշիվ և եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.7 Հաստատության անվանումն է՝

Հայերեն լրիվ ՝<< Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Ռուսերեն լրիվ "Школа искусств города Цахкадзора" ОНО.

Անգլերեն լրիվ ՝ "School of art of Tsaghkadzor" community non-profit organization.

1.8 Դպրոցի գտնվելու վայրն է՝ Ծաղկաձոր համայնք, ք. Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու 85/1:

1.9 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.10 Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.11 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Դպրոցի գործնեության նպատակը արվեստի բնագավառում արտադպրոցական, գեղագիտական, կրթամշակութային ուսումնական կրթության իրականացումն է.

ա) երաժշտական մասնագիտական կրթության իրականացում,

բ) արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,

գ) ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում,

օժտված և տաղանդավոր երեխաներին համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար նախապատրաստում,

դ) մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,

ե) բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում:

2.2 Հաստատությանը կից տվյալ ուսուցման հաստատության մասնագիտացման պրոֆիլին համապատասխան կարող են կազմակերպել բնակչությանը մատուցվող վճարովի ծառայություններ պայմանագրային հիմունքներով:

2.3 Վճարովի համակարգում դպրոցի տնօրենության կողմից ուսումնավարձի գանձման ժամկետները սահմանվում են դպրոցի տնօրենության կողմից:

2.4 Հաստատության կրթական գործունեությունը իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Դպրոցում բոլոր դիմորդների համար ընդունելությունն իրագործվում է ընդհանուր հիմունքներով:

3.2Մանկավարժական կազմի համար աշխատանքային ժամանակահատված համարվում է ընթացիկ տարվա օգոստոսի 12-ից մինչև հաջորդ տարվա հունիսի 30-ը ներառյալ:

3.3 Դպրոցի աշակերտության համար ուսումնական տարին սկսվում է ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա մայիսի 31-ին:

3.4 Դպրոցի աշակերտության աշնանային, ձմեռային և գարնանային արձակուրդները հատկացվում են հանրապետության ժող.կրթության համակարգում գործող հանրակրթական դպրոցների համար սահմանված ժամանակահատվածներում:

3.5Ուսումնական աշխատանքները դպրոցում իրականացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանի և ծրագրերի, դասաժամերի համաձայն:

3.6 Դպրոցի ամենօրյա գործընթացը իրականացվում է տնօրենի կողմից ըստ կիսամյակների հաստատված դասացուցակի:

3.7 Անհատական դասի տևողությունը 45 րոպե է, խմբակային դասի տևողությունը 40 րոպե:

3.8 Սովորողների առաջադիմությունը գնահատվում է 10 միավորային համակարգով՝

1-2 անբավարար

3-4-5 բավարար

6-7-8 լավ

9 -10 գերազանց :

3.9 Ուսումնական տարին բաժանվում է 2 կիսամյակի՝

1-ին կիսամյակ- սեպտենբերի 1-ից մինչև դեկտեմբերի 25-ը,

2-րդ կիսամյակ- հունվարի 8-ից մինչև մայիսի 31-ը :

3.10 Մասնագիտական առարկայից փոխադրական ստուգարքները և ավարտական քննությունները անց են կացվում մայիսի 20-ից սկսած:

3.11 Ըստ անհրաժեշտության, առանց վերադաս մարմինների հետ համաձայնեցնելու դպրոցի տնօրենությունը իրավասու է փոփոխել ավարտական քննությունների ժամկետները,ինչպես նաև բացառության կարգով առանձին աշակերտների համար սահմանել փոխադրական ստուգարքների և ավարտական քննությունների նպատակահարմար ժամկետներ, սակայն ոչ ուշ, քան նոր ուս. տարվա սեպտեմբերի 30-ը:

3.12 Միևնույն քաղաքում կամ մարզում սովորողների տեղափոխումը /սկսած 2-րդ դասարանից/ մեկ դպրոցից համանուն մեկ այլ դպրոց կամ այլանուն դպրոցի համապատասխան բաժին իրականացվում է դպրոցի տնօրենության կողմից:

3.13 Քաղաքից քաղաք և մյուս նման դեպքերում տեղափոխումը կատարվում է մարզի մշակույթի և սպորտի բաժնի միջոցով:

3.14 Այլ հանրապետությունից ՀՀ եկած սովորողների տեղափոխումը կատարվում է մշակույթի նախարարության ուսումնական հաստատությունների բաժնի միջոցով:

3.15 Բոլոր տեղափոխումները հնարավոր է ինչպես ուսումնական տարվա սկզբին, այնպես էլ ուսումնական տարվա ընթացքում:

3.16 Վերաքննությունները, վերաստուգարքները անցկացնելու համար սահմանել ժամկետ մինչև սեպտեմբերի 20-ը:

3.17 Աշակերտները, որոնք չեն կատարել ուսումնական ծրագրերը հիվանդության կամ այլ հարգելի պատճառով, կարող են մնալ նույն դասարանում մանկավարժական խորհրդի որոշմամբ և տնօրենի հրամանից հետո:

3.18 Բարձր դասարան տեղափոխելու, մասնագիտությունը փոխելու, առանձին դեպքերում նաև բաժնից բաժին տեղափոխելու համար, պայմանակարգը սահմանել մանկավարժական խորհրդի հիման վրա: Ինչպես նաև դպրոցն ավարտած,սակայն ուսումնառությունը շարունակել ցանկացողները /փոքր համակազմ ունեցող Դպրոցում/ կարող են վերընդունվել, իրենց նախընտրած բաժին, մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա:

3.19 Դպրոց ըստ անհրաժեշտության և ցանկության /փոքր համակազմ ունեցող դպրոցում/ կարող են ընդունվել ոչ միայն մինչև 12 տարեկան երեխաներ / ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլան/, այլ նաև 12-ից բարձր տարիքի երեխաներ՝ հաստատության կանոնադրության և մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա :

3.20 Արվեստի դպրոցում գործող բոլոր բաժիններում սովորողների ուսման վարձավճարներն ու զեղչային համակարգը հաստատում է համայնքի ղեկավարը՝ ավագանու որոշման հիման վրա:

3.21 Պատժելու, ինչպես նաև դպրոցից հեռացնելու մասին կարգը սահմանել մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա:

Պայմանական փոխադրումներ դասարանից դասարան չի թույլատրվում:

22 Դպրոցում սովորողների վարքը չի գնահատվում: Աշակերտների անհատական թերթիկում ուս. տարվա վերջում սովորողը չի բնութագրվում: Սովորողը բնութագիր կարող է ստանալ միայն ավարտական դասարանում կամ դպրոցից դպրոց տեղափոխվելու դեպքում:

3.23 Հանրակրթական դպրոցի ծանրաբեռնվածությունից ելնելով, ինչպես նաև դպրոցում դասավանդող որոշ ուսուցիչների համատեղ աշխատանքով պայմանավորված, դպրոցում դասերը կարող են անցկացվել տարբեր ժամերի և ոչ աշխատանքային օրերին՝ հաստատության կանոնադրության հիման վրա, ինչպես նաև տնօրենի թույլտվությամբ:

3.24 Դպրոցի շրջանավարտները ավարտական քննությունները հանձնելու դեպքում ստանում են ավարտական վկայականներ:

3.25 Սովորելու վերջին 2 տարիների ընթացքում գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտները ստանում են <<գերազանցության վկայական>>:

3.26 Հիվանդության կամ այլ հարգելի պատճառով ավարտական քննություններին չմասնակցելու դեպքում շրջանավարտները կարող են ստանալ ավարտական վկայականները վերջին տարվա առաջադիմության ամփոփիչ գնահատականների ցուցանիշներով:

4. Դպրոցում գործում են հետևյալ բաժինները

4.1 Դասական նվագարաններ

4.2 Փողային և ազգային նվագարաններ

4.3 Երգեցողություն

4.4 Պարարվեստ

4.5 Կերպարվեստ

4.6 Թատերարվեստ

4.7 Կար ու ձև, դիզայն

4.8 Կիթառ

4.9 Դհոլ

4.10 Նոր բաժիններ դպրոցում կարող են բացվել բնակչության ցանկության, դպրոցի տնօրենության կողմից, մասնագետ մանկավարժների կողմից և այլ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

4.11 Սովորողների առաջադիմության վերահսկման ձևերը որոշվում են տիպային ուսումնական ծրագրով:

5. Ընդունելություն

5.1 Դպրոցում ընդունելությունը իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա, ինչպես նաև ծնողի դիմումի և տնօրենի հրամանի հիման վրա:
Փոքր տարիքի երեխաների համար, նոր տնտեսական կարգի համաձայն, կարող են կազմակերպվել վճարովի նախադպրոցական խմբեր:
5.2 Նախադպրոցական խմբից դպրոցի առաջին դասարան ընդունումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

6. Աշակերտների պարտականությունները

6.1 Անվերապահորեն ենթարկվել դպրոցի կանոնակարգի պահանջներին: Դպրոց հաճախել մաքուր և կոկիկ հագնված, տնային հանձնարարությունները կատարած, առանց ուշացումների և անհարգելի բացակայությունների.
ա/ կատարել ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունները,
բ/ ժամանակին մուծել ուսման վարձը, չաղմկել, չկեղտոտել և չփչացնել դպրոցի գույքը և գրականությունը
գ/մասնակցել նախատեսված միջոցառումներին,փառատոներին, մցույթներին:
6.2 Դպրոցի յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է պարտադիր կարգով ենթարկվելու տնօրենության կողմից սովորողների իրավունքների բոլոր կետերի վերաբերյալ կայացրած որոշումներին:

7. ՈՒսումնական գործընթացի մասնակիցները

7.1 Հաստատության ուսումնական գործընթացի մասնակիցները աշակերտներն են, ծնողները /օրինական ներկայացուցիչները/, մանկավարժական աշխատողները:
7.2 Աշակերտների ընդունելության ժամանակ հաստատության տնօրենությունը պարտավոր է ծնողներին ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:
7.3 Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:
7.4 Աշակերտի և հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիման վրա:
7.5 Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության կողմից հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում, կամ գտնվում են ուսումնառության մեջ համաձայնեցնելով մշակույթի բաժնի տարածքային կառավարման մարմնի համապատասխան մարմինների հետ:

7.6 Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները և արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
7.7 Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8.1 Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը:
Համայնքի ղեկավարը, հաստատության տնօրենը, նրա տեղակալները հաստատության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող հաստատության:
8.2 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
8.3Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) հաստատության հիմնադրումը,
բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,
դ)հաստատության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
ե) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,
զ) հաստատության կառավարման համակարգի սահմանումը,
է) հաստատության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
ը) ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծում:
8.4 Համայնքի ղեկավարը իրականացնում է աստատության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
Համայնքի ղեկավարը
ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
բ) իրականացնում է հաստատության գործունեության վերահսկողությունը,
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության գործադիր մարմնի՝ տնօրենի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,
ե) վերահսկողություն է իրականացնում հաստատության ամրացված համայնքային գույքի օգտագործման պահպանության նկատմամբ,

) համայնքի ավագանու որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

թ) իրականացնում է օրենքով, հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

8.5 Հաստատության տնօրեն.

ա) Հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Հաստատության տնօրենը օրենքով,լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաներում ղեկավարում է հաստատության գործունեություն և կրում պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի համայնքային մարմնի որոշումների սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր որը ստորագրում է համայնքի ղեկավարը:

գ) Հաստատության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

դ) Հաստատության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը պատճառած վնասի համար:

զ) Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

8.6 Հաստատության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) իրականացնում է մանկավարժական կադրերի ընտրություն, ստեղծում անհրաժեշտ պայմաններ նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար: Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

է) սահմանում է հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) ապահովում է հաստատության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների [illegible]

) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:
8.7 Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ:
Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգեբարձուների և այլ խորհուրդներ:
8.8 Տնօրենի բացակայության ժամանակ, համայնքի ղեկավարի գրավոր որոշման /հրամանի/ համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

9.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում համայնքի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
9.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
9.3 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
9.4 Հաստատության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
9.5 Համայնքը կարող է հաստատությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Համայնքը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
9.6 Հաստատությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:
Հաստատությունն իրավունք ունի դպրոցի տարածքը կամ գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ համայնքի ղեկավարի որոշմամբ: Ամրացված տարածքի կամ գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ համայնքի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են:
9.7 Համայնքի կողմից գույքը հաստատությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ համայնքի ղեկավարի կամ երրորդ անձանց իրավունքները դադարելու կամ փոփոխելու համար:
9.8 Համայնքի կողմից հաստատությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ հաստատության օգտագործման իրավունքը ծագում է դրան նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
9.9 հաստատության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում աշակերտների ուսման վարձից գոյացած գումարները, ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները հանգանակությունները, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների [illegible] դրամաշնորհները:

արբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են հաստատության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

9.10 Հաստատության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքը:

9.11 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1 Հաստատության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

10.2 Հաստատության շահույթի օգտագործման կարգը սահմանում է համայնքը:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

11.1 Համայնքային հաստատությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել համայնքի որոշմամբ, ՀՀ օրենսդրությամբ:

Համայնքային հաստատությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

11.2 Համայնքային հաստատությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է համայնքի բյուջե:

11.3 Համայնքային հաստատության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր 2024 թվականի թիվ 141

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝
1) Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Խ.Կեչառեցու փողոցի հիմնանորոգման և մայթերի բնական բազալտե քարով կառուցման աշխատանքներ՝ հավելված 1.
2) Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի « Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Ե.Չարենցի, Ավ.Իսահակյան փողոցների և Ավ.Իսահակյան փակուղու հիմնանորոգման և մայթերի բնական բազալտե քարով կառուցման աշխատանքներ՝ հավելված 2.
3) Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի ԾաղկաձորհամայնքիԾաղկաձորքաղաքումզբոսայգուկառուցման աշխատանքներ՝ հավելված 3.
4) Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի «Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 1-ին, 2-րդ, 8-րդ, 10-րդ փողոցների շարունակելի հատվածների, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ և 4-րդ փողոցների հիմնանորոգման աշխատանքներ՝ հավելված 4.
5) Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի 3-րդ փողոց,3-րդ փողոց 1-ին և 3-րդ նրբանցքների, Մարմարիկ բնակավայրի 2-րդ, 3-րդ փողոց 2 նրբ., 5-րդ, 6-րդ փողոցների հիմնանորոգման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ՝ հավելված 5 :
6) Հայաստանի Հանարպետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր

բնակավայրի կոյուղու կառուցման աշխատանքներ՝ հավելված 6:
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Արտավազ-Փյունիկ բնակավայրի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ՝ հավելված 7:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -8

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր 2024 թվականի թիվ 142

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով. հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ծաղկաձոր համայնքի բնակիչ՝ Արթուր Գասպարյանի դիմումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր համայնքի բյուջեի «այլ նպաստեր» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրել դրամական օգնություն 500 000 / հինգ հրյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ՝ Ծաղկաձոր համայնքի,Ծաղկաձոր քաղաքի Եղիշե Չարենցի փողոցի 20 հասցեի բնակիչ՝ Արթուր Գասպարյանին , որդու `Սերյոժա Գասպարյանի բուժման ծախսերի համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր 2024 թվականի թիվ 143

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի և հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 05-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ նախնական համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Վ.Հարությունյանի փողոց 15 հասցեում գտնվող, Համլետ Ասատուրի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 0,734412 հա մակերեսով (ծածկագիր՝ 07-005-0026-0795) հատուկ կահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված ՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասում հյուրանոցային , սպորտի, հանգստի և ժամանցի համալիրի կառուցման համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր 2024 թվականի թիվ 144

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՔԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՈԼԻԲԴԵՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱՁՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի, հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 29-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ նախնական համաձայնություն « Մեղրաձոր ԳՈԼԴ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի վարչական տարածքի մոլիբդենի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -0 Դեմ -5 Ձեռնպահ -3

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ